**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

**ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ**

**«ԿԱՆՉ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

# ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Նվիրված ֆակուլտետի հիմնադրման 90-ամյակին

ԵՐԵՎԱՆ – 2024

Հարգելի՛ գործընկերներ

**2024թ. մայիսի 29 – 30-ը** Երևանի պետական համալսարանի սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնը «ԿԱՆՉ» գիտակրթական հետազոտական կենտրոնի հետ համատեղ կազմակերպում են **«ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ»** խորագրով միջազգային գիտաժողով:

Գիտաժողովը կունենա թեմատիկ հետևյալ ուղղությունները.

1. Ընդերքի ռեսուրսների որոնման, հետազոտման և շահագործման հիմնախնդիրները
2. ՀՀ տնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքի կատարելագործման և զարգացման հիմնախնդիրները,
3. ՀՀ մարզերի, սահմանամերձ ու բարձրլեռնային շրջանների սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները,
4. Տարաբնակեցման, վարչատարածքային բաժանման և տարածքային կառավարման հիմնախնդիրները,
5. Ջրոսաշրջա-ռեկրեացիոն ներուժի օգտագործման հիմնախնդիրները,
6. Կադաստրային համակարգերի զարգացման և ինտեգրման հեռանկարները,
7. Ագրոկլիմայական ռեսուրսների օգտագործման հիմնախնդիրները,
8. Ժողովրդագրական ներուժի օգտագործման հիմնախնդիրները,
9. Տարածքային համաչափ զարգացման հիմնախնդիրները,
10. Շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրները,
11. Ջրոսաշրջային ինդուստրիայի զարգացման հիմնախնդիրները,
12. Աշխարհաքաղաքական գործընթացները և տարածաշրջանային քաղաքականությունը

**Գիտաժողովի լեզուներն են՝** հայերեն, ռուսերեն, անգլերեն:

**Հոդվածներին ներկայացվող պահանջներ են.**

- Բխեն խորագրից:
- Պարունակեն սպառիչ տեղեկություններ հեղինակ(ներ)ի մասին (ազգանուն, անուն, հայրանուն, գիտական աստիճան, կոչումը, էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար):
- Հայերենը **Sylfaen,** ռուսերենը և անգլերենը՝ **Times New Roman** տառատեսակներով (տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1,25, ձախից, աջից, վերևից և ներքևից՝ 20մմ, հղումները՝ տեքստում քառակուսի փակագծերի մեջ, օր.՝ [Պողոսյան Պ.Պ., 2022ա, 2022բ], վերնագիրը՝ մեծատառ, տառաչափը՝ 14):
- Տողի մեջտեղից մեծատառերով տպել զեկույցի վերնագիրը, որից 2 տող ներքև՝ հեղինակի ազգանուն և անունը, գիտական աստիճանը և կոչումը, հաջորդ տողում՝ կազմակերպության անվանումը, այնուհետև, 2 տող ներքև շարադրել տեքստը՝ հավասարեցնելով ձախից:

- Ունենան **հիմնաբառեր (4-6)** և **ամփոփում**՝ անգլերեն և ռուսերեն:
- Նկարները, գծապատկերները jpg / jpeg ֆորմատով:
- Վերոնշյալ չափանիշներով չգերազանցեն **8 էջ** ծավալը:
- Հոդվածները պետք է երաշխավորված լինեն տպագրության համապատասխան գիտական ստորաբաժանման կողմից:

Նշված պահանջներին չբավարարելու դեպքում գիտաժողովի կազմակերպիչները կարող են հոդվածը չընդունել տպագրվող ժողովածուում:

Գիտաժողովին մասնակցելու համար, խնդրում ենք տրամադրել Ձեր տվյալները՝ լրացնելով ՀԱՅՏԸ մինչև 2024թ. մայիսի 1-ը (կամ որոնման տողում copy/paste արեք հետևյալ հղումը՝ https://forms.gle/hhGoPkf4L5RYHT4E9):

Գիտաժողովին մասնակցել ցանկացողները հոդվածները մինչև 2024թ. մայիսի 15-ը կարող են ուղարկել էլեկտրոնային հետևյալ հասցեով. conforgcommittee@gmail.com, հոդվածի ձեռագրի մեկ օրինակ հանձնել ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոն (**511** սենյակ, ներքին **հեռ.** **34-46**):

Մանրամասների համար կարող եք զանգահարել **(+374) 94–76–96–69, (+374) 94 / 33–51–52-01** բջջային հեռախոսահամարներով:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել գիտաժողովի պատասխանատու քարտուղար Անժելա Այրիյանցին՝ գրելով conforgcommittee@gmail.com կամ զանգահարելով նշված հեռախոսահամարներով:

Գիտաժողովի կազմկոմիտե